Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան»
պետական ոչ առևտրային կազմակերպության ռեկտորատի՝
2019 **թվականի մարտի** 21-**ի նիստի** N 16 **արձանագրությունից**

ԼՍԵՑԻՆ.- 2018-2019 **ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում անվանական կրթաթոշակներ տրամադրելու մասին հարցը**:

Զեկուցող՝ ուսումնամեթոդական աշխատանքների գծով պրոռեկտոր Պ.Քալանթարյան:

Զեկուցողը նշեց, որ մանդատային հանձնաժողովի 2019 թվականի մարտի 14-ի, ժամը 11:00-ի նիստում լսվել է 2018-2019 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակների հավակնող թեկնածուների հարցը: Համաձայն գիտական խորհրդի՝ 2016 թվականի հունիսի 22-ի նիստում հաստատված «Հայասատանի պետական տնտեսագիտական համալսարանում ուսանողական նպաստի, պետական և անվանական կրթաթոշակների հատկացման կանոնակարգի»՝ ֆակուլտետների դեկանները ներկայացրել են իրենց ֆակուլտետներում անվանական կրթաթոշակների հավակնող թեկնածուների անունները: Մանդատային հանձնաժողովը որոշել է ռեկտորատի հաստատմանը ներկայացնել 2018-2019 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում համալսարանի 6 ֆակուլտետների և ուսանողական խորհրդի կողմից տրամադրվող անվանական կրթաթոշակների թեկնածուներին: Մանդատային հանձնաժողովի որոշումը (նիստի արձանագրությունը) կցվում է:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.-

Ռ.Հայրապետյանը, Ա.Հակոբյանը, Մ.Մովսիսյանը, Գ.Նազարյանը, Թ.Մկրտչյանը, Վ.Միքայելյանը, Ս.Խաչիկյանը, Մ.Բաղալյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.- Համաձայն գիտական խորհրդի 2016 թվականի հունիսի 22-ի նիստում հաստատված «Հայասատանի պետական տնտեսագիտական համալ-սարանում ուսանողական նպաստի, պետական և անվանական կրթաթոշակների հատկացման կանոնակարգի»՝ հաստատել 2018-2018

ուսումնական տարվա երկրորդ կիսամյակում համալսարանի 6 ֆակուլտետների և ուսանողական խորհրդի կողմից տրամադրվող անվանական կրթաթոշակների թեկնածուների վերաբերյալ մանդատային հանձնաժողովի որոշումը և անվանական կրթաթոշակներ տրամադրել՝

1. **Գագիկ Զարմավիրի Բաղադյանին՝** կառավարման ֆակուլտետի «Հակաճգնաժամային կառավարում» մասնագիտության բակա-լավրիատի առկա **անվճար** ուսուցման համակարգի 4-րդ կուրսի ուսանող: Սահմանել «Զ.Բաշինջաղյանի անվան» կրթաթոշակ:

2. **Մերի Ռոբերտի Օհանյանին՝** ֆինանսական ֆակուլտետի «Մաքսային գործ» մասնագիտության բակալավրիատի առկա **անվճար** ուսուցման համակարգի 4-րդ կուրսի ուսանող: Սահմանել «Հ.Թումանյանի անվան» կրթաթոշակ:

3. **Տաթևիկ Արաիկի Ռոստոմյանին՝** տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների ֆակուլտետի «Մակրոտնտեսական քաղաքականություն և կանխատեսում» մասնագիտության բակալավրիատի առկա **անվճար** ուսուցման համակարգի 4-րդ կուրսի ուսանող: Սահմանել «Մ.Քոթանյանի անվան» կրթաթոշակ:

4. **Մարինե Երվանդի Ալեքսանյանին՝** մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետի «Շուկայաբանություն (Մարքեթինգ)» մասնագիտության բակալավրիատի առկա **անվճար** ուսուցման համակարգի 4-րդ կուրսի ուսանող: Սահմանել «Վ.Ներկարարյանի անվան» կրթաթոշակ:

5. **Արշակ Քրիստի Իսոյանին՝** ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի «Կառավարման տեղեկատվական համակարգեր» մասնագիտության բակալավրիատի առկա **անվճար** ուսուցման համակարգի 4-րդ կուրսի ուսանող: Սահմանել «Ա.Արզումանյանի անվան» կրթաթոշակ:

6. **Սոնա Կարենի Ոսկանյանին՝** հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի «Հաշվապահական հաշվառում (ըստ ճյուղերի)» մասնագիտության բակալավրիատի առկա **վճարովի** ուսուցման համակարգի 4-րդ կուրսի ուսանող: Սահմանել «Կ.Կարագյանի անվան» կրթաթոշակ:

7. **Էլմիրա Սարգսի Մուրադյանին՝** կառավարման ֆակուլտետի «Կառավարում» մասնագիտության բակալավրիատի առկա **վճարովի** ուսուցման համակարգի 4-րդ կուրսի ուսանող: Սահմանել համալսարանի ուսանողական խորհրդի կողմից տրամադրվող կրթաթոշակ:

Ռեկտորի պաշտոնակատար՝ **Ռ. Ա. Հայրապետյան**

Գիտական քարտուղար՝ **Ն. Հ. Դարբինյան**

2019 թ. մարտի 21
Երևան